

ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Ստեղծագործության գաղափարի բացահայտման
կարողության ձևավորումը բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում

Հետազոտող ուսուցիչներ՝ Աննա Ղազարյան
Հայկանուշ Սիրականյան
Հասմիկ Օհանյան
Աննա Աթոյան
Լուսինե Խոջայան
Սիրանուշ Գալստյան
Մարի Այվազյան

Երևանի Կարեն Ասրյանի անվան համար 171 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ԲՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ.....	5
1.1. Բնագրի շուրջ աշխատանքը, դրա քայլաշարը տարրական դասարաններում ...	5
1.2 Ստեղծագործության գաղափարի բացահայտման կարողության ձևավորումը տարրական դասարաններում.....	11
ԳԼՈՒԽ 2. ԲՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԸ ...	17
2.1 ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի պետական կրթական չափորոշիչի և մայրենիի առարկայական ծրագրի վերլուծություն.....	17
2.2 Մայրենիի այլընտրանքային դասագրքերի («Մայրենի 3») վերլուծություն	21
2.3 Հետազոտության արդյունքների մշակում և վերլուծություն	29
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	38
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	39
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	40

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության թեմայի արդիականությունը: Ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է կարդացած ստեղծագործության գաղափարը հասկանալու կարևորությամբ և այդ ուղղությամբ մայրենիի դասերի ընթացքում իրականացվող աշխատանքների անկատարությամբ:

Ուսումնասիրության նպատակը: Աշխատանքի նպատակն է բացահայտել տարրական դասարաններում բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում ստեղծագործության գաղափարի բացահայտման կարողության ձևավորման գործընթացի դժվարությունները, մշակել ու ներկայացնել մեթոդական ցուցումներ, որոնք կնպաստեն բնագրի շուրջ աշխատանքի միջոցով կրտսեր դպրոցականների ստեղծագործության գաղափարի բացահայտման կարողության ձևավորման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Ուսումնասիրության խնդիրները: Ուսումնասիրության նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել հիմնախնդրի վերաբերյալ մեթոդական գրականություն և դիտարկել նրանցում արծարծված հիմնական մոտեցումները:
2. Հիմնախնդրի տեսանկյունից դիտարկել տարրական դպրոցի մայրենիի այլընտրանքային դասագրքերը:
3. Դասալսումներ իրականացնել գործընկերների մոտ, իրականացնել փորձարարական դասեր, վերլուծել արդյունքները:
4. Մշակել բնագրի շուրջ աշխատանքի միջոցով կրտսեր դպրոցականների ստեղծագործության գաղափարի բացահայտման կարողության ձևավորմանը և յուրացման արդյունավետությանը նպաստող մեթոդական ցուցումներ:

Ուսումնասիրության նորույթը: Ներկայացնել ենք բնագրի շուրջ աշխատանքի միջոցով կրտսեր դպրոցականների՝ ստեղծագործության գաղափարի բացահայտման կարողության ձևավորման արդյունավետությանը նպաստող մեթոդական ցուցումներ:

Ուսումնասիրության տեսական նշանակությունը: Մեր առաջադրած խնդիրների լուծումները կարող են նպաստել կրթության որակի բարձրացմանը տարրական

դպրոցում, ինչպես նաև վեր բարձրացնել տարրական դպրոցի մայրենիի դասագրքերում առկա բացթողումները՝ այդ ուղղությամբ համապատասխան մարմինների կողմից աշխատանքներ կատարելու անհրաժեշտությունը կարևորելու նպատակով: Մշակել ենք մեթոդական ցուցումներ:

Ուսումնասիրության գործնական նշանակությունը: Մեր մշակած մեթոդական ցուցումները կարող են օգտակար լինել ինչպես ուսուցիչներին՝ մայրենիի դասերի ընթացքում, այնպես էլ հետագայում այս թեման ուսումնասիրողներին:

Ուսումնասիրության մեթոդները: Ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք հետևյալ հետազոտական մեթոդները.

- Հիմնահարցի վերաբերյալ առկա մասնագիտական գրականության ուսումնասիրում և վերլուծություն:
- Դասալսումներ և արդյունքների վերլուծություն:
- Հարցախույզ տարրական դասարանների ուսուցիչների շրջանում և արդյունքների վերլուծություն:

Ուսումնասիրության օբյեկտը: Տարրական դասարաններում մայրենիի դասերին բնագրի շուրջ աշխատանքի միջոցով ստեղծագործության գաղափարի բացահայտման կրտսեր դպրոցականների կարողության ձևավորման գործընթացն է:

Ուսումնասիրության առարկան: Բնագրի շուրջ աշխատանքի միջոցով կրտսեր դպրոցականների ստեղծագործության գաղափարի բացահայտման կարողության ձևավորման մեթոդական համալիրն է:

Ուսումնասիրության բազան: Մեր ուսումնասիրությունները իրականացրել ենք Ավանի թիվ 171 հիմնական դպրոցի երրորդ և չորրորդ դասարաններում:

Ուսումնասիրության կառուցվածքը: Մեր աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, առաջարկություններից, գրականության ցանկից և հավելվածից: Ընդամենը՝ 40 էջ:

**ԳԼՈՒԽ 1. ԲՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ
ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

1.1. Բնագրի շուրջ աշխատանքը, դրա քայլաշարը տարրական դասարաններում

Տարրական դպրոցում մայրենիի դասերը հիմնականում իրականացվում են բացատրական ընթերցանության մեթոդով: «Բացատրական ընթերցանության մեթոդը մանկավարժահոգեբանական, լեզվաբանական, և գրականագիտական տեսանկյուններով հիմնավորված համակարգ է, որի հիմքում ընկած է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը: Հանգամանք, որն անկասկած ենթադրում է արդյունավետություն այդ բառի լայն իմաստով»:[6, էջ 51] Բացատրական ընթերցանության մեթոդը տարրական դպրոցում կիրառվում է գրաճանաչության ավարտից հետո, երբ կրտսեր դպրոցականն արդեն ձեռք է բերել կարդալու նախնական կարողություններ: «Բացատրական ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրամասերն են՝

- գրույց
- բնագրի ընթերցում
- բառային աշխատանք
- աշխատանք բնագրի շուրջ
- պատմում
- ամփոփում»: [2, էջ 103]

Տարրական դասարաններում կարդալու կարողության ձևավորումը մայրենիի դասի հիմնական նպատակներից է: «Հոգեբաններն ու մեթոդիստներն առանձնացնում են կարդալու հմտության ձևավորման երեք փուլ՝ **վերլուծական, համադրական և ավտոմատացված:**

Վերլուծական փուլում տեսողական ընկալման միավորը տառն է կամ վանկն է, համադրական փուլում կարդալու ամենափոքր միավորը դառնում է բառը: Ընթերցողը կարդում է ամբողջական բառերով, իսկ ավտոմատացված կարդալու միավորը նախադասությունն է. Ընթերցողը կարդում է նախադասություններով»:[2, էջ 111]

Առանց կարդալու հստության անձը չի կարող իրականացնել լիարժեք կրթություն: Հասկանալի է, որ խոսքը ոչ թե ընդհանրապես կարդալ իմանալու մասին է, այլ կարդալ՝ պահպանելով նրա բոլոր որակական հատկանիշները: Դրանք են.

- **կարդալ ճիշտ**, այսինքն, այնպես ինչպես գրված է՝ պահպանելով հայերենի գրական շեշտն ու ուղղախոսության կանոնները.
- **կարդալ հասկանալով**, այսինքն, ըմբռնել կարդացածի հիմնական միտքը՝ գաղափարը, կռահել ենթատեքստը, որոշել դեպքերի պատճառահետևանքային կապերը.
- **կարդալ սահուն**, այսինքն, այնպես ինչպես կխոսեիր, թույլ չտալ անհարկի դադարներ, կրկնություններ.
- **կարդալ արտահայտիչ**, այսինքն ըմբռնել ներկայացված մտքերի հոգեբանական-զգացմունքային աշխարհի ներկայանակի բոլոր երանգները և այդ ամենը տարաբնույթ արտահայտամիջոցներով ներկայացնել ունկնդրին.
- **կարդալ արագ** նշանակում է կարդալ սեփական խոսքի տեմպով»: [2, էջ 112-118]

«Ստեղծագործության բազմակի ընթերցանությունն իրականացվում է կարդալու տարբեր տեսակներով՝ հետևյալ հաջորդականությամբ.

- շարունակելով,
- կանգառներով, (մեկնաբանելով)
- ընտրովի,
- դերերով»: [2, էջ 124]

Բացատրական ընթերցանության մեթոդի՝ «Աշխատանք բնագրի շուրջ» բաղադրամասի մեթոդապես ճիշտ իրականացումը լուծում է այն խնդիրը, որ երեխան ոչ թե պասիվորեն ընկալի այն, ինչ կարդում է, այլ «իր վրա վերցնի» կարդացածն իմաստավորելու, նրա մեջ գաղափար դնելու առաջատար դերը: Տարրական դպրոցի մայրենիի դասագրքերում ընթերցանության համար նախատեսված յուրաքանչյուր նյութի շուրջ պիտի իրականացվի նպատակասլաց աշխատանք: [2, էջ 131]

Բնագրի հասկացման առաջին խնդիրն անձանոթ բառերի որոշումն ու դրանց իմաստների բացատրությունն է:

Երկրորդ խնդիրը լեզվաարտահայտչամիջոցների ճանաչումն է, իմաստի ըմբռնումը. այս աշխատանքի ճիշտ կազմակերպումն աստիճանաբար կնպաստի ծանոթ արտահայտամիջոցները սեփական խոսքում գործածելուն:

Նշված երկու խումբ խնդիրների լուծումը կնպաստի, որ աստիճանաբար անցում կատարվի երրորդ՝ «կարդացած բնագրի հասկացման քայլին», սա կնպաստի «թաքնված», մտքերը կռահելու աշակերտի կարողության ձևավորմանը:

Կարդացածը հասկանալու, հեղինակի, գործող անձանց հետ երկխոսության մեջ մտնելու կարողության ձևավորման գործընթացում կարևոր են կարդացած բնագրի վերաբերյալ հատուկ նպատակով կազմված հարցերը, որոնք ուղղակիորեն կամ «թաքնված» օգնում են աշակերտներին՝ հասկանալու բնագրի յուրաքանչյուր նախադասության միտքը, ապա ստուգելու իր տեսակետը՝ կարդալով տեքստի շարունակությունը: [2, էջ 133-136]

Ինչպես արդեն նշվել է, մայրեննիի դասերը իրականացվում են երեք փուլերով: Այժմ ներկայացնենք բնագրի ստեղծագործական գաղափարի բացահայտման ուղղությամբ իրականացվող աշխատանքի մեթոդական շղթան բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում՝ դասի երեք փուլերում:

Խթանման փուլի կարևորագույն նպատակներից մեկը սովորողների մեջ պատմվածքի հանդեպ հետաքրքրություն առաջացնելն է: Դրա համար մանկավարժները պետք է կիրառեն մեթոդական տարբեր հնարներ: Երբեմն պատմվածքի բովանդակությունն արտահայտող առանցքային բառը դարձնելով բառ-բանալի՝ կարելի է առաջարկել գտնել հանելուկի պատասխանը: Այս աշխատանքի շնորհիվ աշակերտների մոտ հետաքրքրություն է առաջանում: Նրանց մեծ հետաքրքրությամբ ուզում են իմանալ, թե ինչի մասին է պատմվածքը: Հետաքրքրությունն ավելի է մեծանում, երբ ուսուցիչը ցուցադրում է թեմատիկ նկարը: Աշակերտներին պետք է առաջարկել նոր թեմատիկ նկար, որը չկա դասագրքերում:

Իմաստավորման փուլ. Բնագրի ընթերցումը աշակերտների գրագետ խոսքի ձևավորման հիմնական նախադրյալն է: Բնագրի ընթերցումը նպաստում է աշակերտների աշխարհայացքի ձևավորմանն ու բառապաշարի հարստացմանը»: [4, էջ 6]

«Ազատ, անկաշկանդ խոսելու ամենաբարենպաստ պայմանը վստահությունն է քեզ ունկնդրող միջավայրի նկատմամբ: Նշանակում է խոսքային գործունեության ծավալման գլխավոր պայմանը դասարանում տիրապետող ազատ, անկաշկանդ մթնոլորտի առկայությունն է»: [2, էջ141-142]

«Սովորողների մտածողության և խոսքի զարգացման արդյունավետության ապահովման համար կրտսեր դպրոցում շահեկան է որոշ բարդություններ ունեցող պատմվածքների ուսուցումը: Մայրենիի դասագրքերում գետեղված ստեղծագործությունների հիմնական գաղափարը թաքնված է լինում ենթատեքստում: Երեխաները ենթատեքստը հասկանում են միայն պատմվածքն ամբողջությամբ ընթերցելուց հետո, որը համադրում են թեմատիկ նկարի հետ: Որպես կանոն դասագրքում ընդգրկված թեմատիկ նկարն ամբողջությամբ չի բացահայտում պատմվածքի իմաստը: Պատմվածքի ընթերցումից և քննարկումից հետո միայն երեխաները կարողանում են եզրակացնել պատմվածքի բարոյական-գաղափարական արժեքը:

Բարդ կառուցվածքով պատմվածքների ուսուցումը պահանջում է մեթոդական լուրջ լուծումներ. պատմելու տարաբնույթ տեսակների կիրառում: Բաց թողնված հատվածներով և թաքնված իմաստով, փոխաբերությամբ արտահայտված պատմվածքները նպաստում են աշակերտների քննադատական մտածողության զարգացմանը՝ ուսուցման գործընթացում սովորողների համար ապահովելով երևակայական, ստեղծագործական մտքի դրսևորման բավարար պայմաններ»: [4, էջ 4-5]

«Կրտսեր դպրոցի ցածր դասարաններում նոր նյութը պետք է առաջինը կարդա ուսուցիչը, որպես խոսքի օրինակ, իսկ կրտսեր դպրոցի բարձր դասարաններում առաջինը կարդում են վարժ կարդացող աշակերտները: Մեթոդապես կարևոր է, որ պատմվածքի առաջին ընթերցումը իրականացվի առանց քննարկումների, որպեսզի այն աշակերտների վրա ունենա համապատասխան ներգործություն: Որպեսզի աշակերտները ամբողջությամբ ընկալեն ստեղծագործության հիմնական միտքը, անհրաժեշտ է բացի վերոնշված աշխատանքներից իրականացնել նաև բառային աշխատանք՝ աշակերտներին բացատրել ստեղծագործության մեջ տեղ գտած բացատրական արժեք ունեցող բառերի բացատրությունն ուղղագրական արժեք

ունեցող բառերի ուղղագրությունը: Բառը բացատրելիս անհրաժեշտ է շեշտը դնել գննականության վրա»։ [4, էջ 6]

«Ինչպես դիդակտիկայի ոսկե կանոնն է ասում «տեսանելին պետք է տալ տեսանելիին, իսկ շոշափելին՝ շոշափելիքին»: Կարևոր է նաև կետադրության բացատրությունը»: [4, էջ 7]

«Տարրական դասարաններում մայրենիի դասի ժամանակ ընթերցված նյութի շուրջ բառային աշխատանքը պետք է իրականացնել գործնականորեն, այսինքն՝ չշեշտել տեսական գիտելիքներն ու սահմանումները: Կարդացած ստեղծագործության շուրջ իրականացվող բառային աշխատանքի նպատակը անձանոթ բառերի ու դարձվածքների բացատրությունն է, դրանց յուրացումն ու ակտիվացումը: Աշխատանքի այս փուլում իրականացվում է նաև տեքստում հանդիպած ուղղագրական արժեք ունեցող բառերի դիտարկում»։ [2, էջ 125]

«Տարրական դասարաններում անձանոթ բառերի ու բառակապակցությունների բացատրման արդյունավետ միջոցներից են **գննական պարագաները, բառը նկարով բացատրելը**: Անձանոթ բառերն ու դարձվածքները կարելի է բացատրել նաև **ծանոթ բառերի ու բառակապակցությունների հետ համեմատելով ու հակադրելով**, ինչպես նաև բառը աշակերտներին ծանոթ բառով փոխարինելով: Եթե բնագրում հանդիպում են բազմիմաստ բառեր, ապա պետք է բացատրել դրանց միայն այն իմաստը, որով դրանք գործածված են տվյալ բնագրում: Անձանոթ բառերը կարելի է բացատրատրել նաև հոմանիշային, հականիշային գույգերի թվարկման միջոցով, ինչպես նաև բառակազմական վերլուծության միջոցով: Իսկ բառիմաստի լիարժեք յուրացումն ապահովելու համար անհրաժեշտ է երեխաներին հանձնարարել նորածանոթ բառերով կազմել բառակապակցություններ, նախադասություններ»։ [2, էջ 126]

«Բնագրի ճիշտ հասկացման համար կարևոր նշանակություն ունի **բնագրի վերլուծությունը**: «Ըստ Զավեն Ավետիսյանի՝ վերլուծել գրական ստեղծագործությունը նշանակում է նախ առանձնացնել նրա կառուցվածքային բոլոր միավորները, ստուգել ոչ միայն դրանցից յուրաքանչյուրի գործունեության, այլև փոխհարաբերության լիարժեքությունը»։ [6, էջ 52] Դրա համար աշակերտներին պետք է սովորեցնել տեքստում հաջորդաբար առանձնացնել բանալի հատվածները,

այն կերպարները, բառերը, որոնք արտահայտում են հերոսների գործողությունների հիմնական դրդապատճառները: Հաջորդ քայլում անհրաժեշտ է որոշել բնագրի բանալի բառերը, որոնց օգնությամբ հնարավոր է բացահայտել հերոսների, գործող անձանց հիմնական միտքը»: [2, էջ 144]

«Կերպարների շուրջ վերլուծական աշխատանքը պետք է իրականացնել հետևյալ քայլերով.

ա) ստեղծագործության մեկնաբանելով և ընտրովի ընթերցանություն՝ նախապես մշակված հարցերով,

բ) ստեղծագործության գործող անձանց և կերպարների որոշում, դրանց դերի և նկարագրի ճշգրտում,

գ) դեպքերի դիտարկում, կերպարների դրական կամ բացասական նկարագրի հիմնավորում,

դ) դիտողությունների, եզրահանգումների դիտարկու>>: [2, էջ 156]

Կարևոր աշխատանք է նաև բնագրի վերարտադրումը, ամեն ինչ պետք է անել, որպեսզի աշակերտները պատմվածքը վերարտադրեն ոչ թե անգիր, այլ հասկանալով:

Դրան հասնելու համար աշակերտների մոտ պետք է զարգացնել դատողություններ անելու, վերլուծելու, համադրելու կարողություններ:

Կշռադատման փուլ. Պատմվածքի ուսուցման մեթոդական շղթայի վերջին քայլը ամփոփումն է, որը նույնպես նպաստում է աշակերտների խոսքի և քննադատական մտածողության զարգացմանը: Այս փուլում պետք է կարևորել պատմվածքում ներկայացված դեպքերի ու դեմքերի վերաբերյալ աշակերտների գնահատողական վերաբերմունքը: Պատմվածքի բովանդակության, հիմնական մտքի, գաղափարների ճիշտ և ամբողջական ընկալման, ենթատեքստի կռահման համար դասի կշռադատման փուլում աշակերտները պետք է կարողանան ոչ միայն ամփոփել տրված դասից սովորած գիտելիքները, ստացված հույզերն ու տպավորությունները, այլև ուշադրություն դարձնեն, թե հեղինակը պատմվածքի հիմքում դրված գաղափարներն ամբողջացնելու և տպավորիչ դարձնելու համար ինչ լեզվաոճական միջոցներ է օգտագործել»: [4, էջ 8] «Կարդացած ստեղծագործության կերպարների արարքները, դատողությունները դիտարկելիս անհրաժեշտ է ազատություն տալ

աշակերտների մտածողությանը, խոսքին, թույլ տալ, որ նրանք ինքնուրույն հանգեն եզրակացությունների, ձևակերպեն դատողություններ: Պատմվածքներն ամփոփելիս աշակերտները պետք է կարողանան միմյանց հարցեր տալ, դատողություններ անել, երևույթներին նայել իրենց տարիքի, փորձի, հայացքների տեսանկյունից»: [2, էջ 153]

«Այսպիսով պատմվածքի ուսուցումը հնավորություն է տալիս զարգացնելու կրտսեր դպրոցական տարիքի աշակերտների խոսքը և մտածողությունը՝ նախադրյալներ ստեղծելով կրթության մյուս օղակներում անձի ներդաշնակ և համակողմանի զարգացման համար»: [4, էջ 8]

1.2 Ստեղծագործության գաղափարի բացահայտման կարողության ձևավորումը տարրական դասարաններում

«Ա. Տեր-Գրիգորյանի հրատարակած հայոց լեզվի դասագրքերի մեթոդական կառույցներում չնայած նրան, որ գործածված չեն գաղափար, թեմա, տեքստ, ենթատեքստ և այլ գրականագիտական եզրույթներ, սակայն դրանցում տեղ գտած հարցերի և առաջադրանքների միջոցով մշտապես փորձ է արվել կարդացած ստեղծագործությունների գաղափարի բացահայտման ուղղությամբ, հարցերն ու առաջադրանքները աշակերտներին ուղղորդել են կերպարների էությունն ըմբռնելու, դրանց շուրջ քննարկումներ իրականացնելու, դատողություններ անելու և այլն»: [6, էջ 25]

«Թեև առաջին դասարանի ծրագրերում գրական տարրական գիտելիքներ նախատեսված չեն, սակայն «կարդացածի ընկալում, աշխատանք բնագրի շուրջ» բաղադրիչում նշվում են «գրական ստեղծագործության հուզական կողմի ընկալման կարողության մշակում» պահանջը և բնագրի շուրջ տարվող ավանդաբար ընդունված աշխատանքները:

Աշակերտները նույնիսկ առաջին դասարանում այբբենարանի փոքրածավալ բնագրերի բովանդակության շուրջ ոչ միայն ուշագրավ մտքեր են արտահայտում, այլև գաղափարի շուրջ դատողություններ և եզրակացություններ են ձևակերպում:

Մա նշանակում է, որ կարդալու նախնական կարողության ձևավորման փուլում արդեն կարելի է խոսել ստեղծագործության գաղափարի մասին՝ առանց եզրույթի:

Սուրբ Գրիգոր Նարեկացի կենտրոնի կողմից հրատարակված «Հայոց լեզվի ուսուցման ծրագրում (երկրորդ դասարան)» նշվում է, որ աշակերտին արտահայտիչ կարդալ պահանջելուց առաջ պետք է բնագրի շուրջ աշխատանք տանել, երեխաների հետ քննարկել ստեղծագործության գլխավոր միտքը, գաղափարը, վերլուծել հերոսների վարքը, գործողությունները և դեպքերի պատճառահետևանքային կապերը: Գրականագիտական գիտելիքների շուրջ աշխատանքը շարունակվում է դասարանից դասարան. երրորդ դասարանում նախատեսված է զարգացնել կարդացած ստեղծագործության հիմնական միտքը՝ գաղափարը հասկանալու, այն մեկ-երկու նախադասությամբ ներկայացնելու երեխաների կարողությունները, ձևավորել կարդացած ստեղծագործության գործող կերպարները որոշելու և նրանց նկարագիրը տալու պարզ կարողություններ:

Այս նույն ծրագրում չորրորդ դասարանի համար նախատեսված է երկրորդ և երրորդ դասարաններում աշակերտների ձեռք բերած գիտելիքների խորացում և ամրակայում»: [6, էջ 35-38]

«Կարդացած ստեղծագործության գաղափարի բացահայտման ուղղությամբ աշխատանքն իրականացնելիս պիտի նկատի ունենալ, որ կրտսեր դպրոցականները ունեն դեպքերը սեփական տեսանկյունից տեսնելու և դիտարկելու ունակություն: Սակայն նրանք հակված են նաև իրավիճակները ուրիշների տեսանկյունից ընկալելու ունակություն: Այդ իսկ պատճառով ուսուցիչը դասարանում պետք է ստեղծի վստահելի մթնոլորտ. աշակերտները պետք է մտածեն ազատ, արտահայտվեն համարձակ»: [2, էջ 158]

«Կարդացած ստեղծագործության գաղափարի բացահայտման համար նախ անհրաժեշտ է նկատի ունենալ կրտսեր դպրոցականների բազմաբնույթ մտածողության տեսակները, սովորողներին ընձեռել ազատ մտածելու, դատողություններ անելու, սեփական կարծիքն արտահայտելու հնարավորություն, կարևորել աշակերտների պահանջմունքներն ու հուզող խնդիրները, մասնավորապես զգացմունքների և երևակայության ինքնատիպությունը»: [2, էջ 160]

«Զրույցի բոլոր տեսակներն էլ նպաստում են սովորողների ընթերցողական կարողության զարգացման արդյունավետությանը: Կարդացած ստեղծագործության բովանդակության և գաղափարի ըմբռնմանը խթանող գրույցը, որը մեծապես նպաստում է շահագրգիռ ընթերցանությանը նախապատրաստական գրույցն է: Այս գրույցի հիմնական նպատակը ունկնդրվելիք նյութի հիմնական իմաստը՝ գաղափարը հասկանալու համար հիմք ստեղծելն է: Նախապատրաստական գրույցը համընկնում է քննադատական մտածողությանը նպաստող ԽԻԿ համակարգի խթանման փուլին:

Ստեղծագործության ընթերցումից առաջ գրույցի անհրաժեշտության մասին նշել է նաև Խ. Աբովյանը: Նա գրույցի միջոցով առաջարկում է լուծել երկու խնդիր՝ ընթերցողին նախապատրաստել ստեղծագործության գաղափարի ընկալմանը և ստեղծագործության բովանդակության ըմբռնման համար իմաստավորել երեխաների կենսափորձը»: [6, էջ 59-60] «Կարդացած բնագրի գաղափարական բովանդակության ըմբռնման արդյունավետությունը մեծապես ապահովում են գրական տարրական հասկացությունների իմացությունը, դրանց օգնությամբ բնագրի ենթաշերտերի մեջ թափանցելու աշակերտների կարողությունները»: [6, էջ 100]

«Գրական տարրական գիտելիքների ուսումնասիրումն իրականացվում է մայրենիի դասի ընթերցանության փուլում՝ կարդացած բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում: Առաջարկվում է գրական գիտելիքների ձեռքբերման գործընթացի հետևյալ փուլերը.

- գրական նախնական գիտելիքների ձեռքբերում,
- գրական տարրական գիտելիքների յուրացում:

Առաջինի մեջ մտնում են վերնագրի, բառի գեղարվեստական արժեքի, տեքստի և թեմայի մասին գաղափարի ու դրանց ըմբռնման հետ կապված կարողությունն ու զարգացումը:

Գրական տարրական գիտելիքների մեջ մտնում են հիմնական մտքի՝ գաղափարի, ենթատեքստի, գործող անձանց՝ կերպարների մասին գիտելիքների ու կարողությունների ձևավորումն ու զարգացումը դասարանից դասարան»: [6, էջ 102-103]

Գրական տարրական գիտելիքների բովանդակությունն ու ուսումնասիրման հաջորդականությունը երկրորդից չորրորդ դասարաններում հետևյալն է՝ կերպարների էության բացահայտում, գաղափարի բացահայտում, ենթատեքստի բացահայտում: Դասարանից դասարան ավելի են շատանում կերպարները ճանաչելուն, նրանց էությունը քննարկելուն, դեպի ստեղծագործության գաղափարը տանելուն միտված հարցերն ու առաջադրանքները: Կերպարների նկարագրերի շուրջ աշխատանքը իրականացվում է դեռևս առաջին դասարանից, սակայն այդ աշխատանքն ավելի իմաստալից սկսվում է իրականացվել երկրորդ դասարանից: [6, էջ 124-127]

«Կարդացած բնագրի շուրջ վերլուծական աշխատանքի գերխնդիրը կերպարների կրած գաղափարների միջոցով հիմնական մտքի բացահայտումն է, որը տարրական դասարաններում հիմնականում իրականացվում է մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցների բաղադրամասերի միջոցով»: [6, էջ 133] «Կարդացած բնագրի շուրջ վերլուծական աշխատանքի գերխնդիրը կերպարների կրած գաղափարների միջոցով հիմնական մտքի բացահայտումն է, որը տարրական դասարաններում հիմնականում իրականացվում է մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցների բաղադրամասերի միջոցով»: [6, էջ 133]

Տարրական դասարաններում բազմակի ընթերցանության արդյունավետության հիմնական գործոնը ստեղծագործության հիմնական գաղափարի բացահայտումն է: Բազմակի ընթերցանությունը նպաստում է ոչ միայն կարդալու կարողության ձևավորմանը, այլ նաև ստեղծագործության հիմնական գաղափարի բացահայտմանը: Այս աշխատանքն իրականացնելիս ուսուցիչը շեշտադրվում է աշակերտների տրամաբանական, վերլուծական մտածողության ակտիվացմանը, որն էլ աշակերտներին կամաց-կամաց տանում է ստեղծագործության հիմնական գաղափարի բացահայտմանը: Բնագրի հիմնական գաղափարի հասկացումը մեծապես կախված է ուսուցչի մեթոդապես ճիշտ կազմակերպված աշխատանքից: Սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ստեղծագործության հիմնական գաղափարը պետք չէ պատրաստի մատուցել երեխաներին: [6, էջ 133-134] «Գաղափարի բացահայտմանը, ինչպես Բելինսկին է նշել, «կենդանի կիրք է, վառ արտահայտված պաթոս»: Կարծում ենք, որ այդ կիրքն ու պաթոսն էլ դառնում

են գաղափար: Երբ դասանյութն անձնային նշանակություն չի ստանում աշակերտի համար, նա լավագույն դեպքում լսողի կամ դիտողի տեսք է ընդունում: Հետազոտական ռեֆլեքսն սկսում է գործել միայն այն ժամանակ, երբ աշակերտի մեջ առաջանում է հետաքրքրություն, տարակուսանք, կասկած, զարմանք, ենթադրություն և այլն»: [6, էջ 134]

Կարդացած ստեղծագործության վերլուծության ժամանակ պետք է աշակերտների ուշադրությունը ուղղորդել հերոսների, հեղինակի գործածած բառերի, լեզվաարտահայտչամիջոցների վրա: Կարդացած ստեղծագործության հիմնական մտքի բացահայտումն արդյունավետ է իրականանում փոխներգործուն մեթոդների կիրառման շնորհիվ: Այս մեթոդների կիրառման շնորհիվ գործընթացը դառնում է աշակերտակենտրոն: Աշակերտների գիտակցությանը պետք է հասցնել, որ ստեղծագործության հիմնական գաղափարը ոչ թե պետք է որոնել ինչ-որ էջում պատրաստի, այլ արտահայտված կենդանի պատկերներով: Աշակերտները առանց դժվարանալու կարողանում են կատարել Վենի դիագրամ և Քառաբաժան մեթոդական հնարները: Այս աշխատանքները աշակերտներին գործունեությանը տալիս է կշռադատելու հնարավորություն, աշակերտները իմաստավորում են կարդացածի բովանդակությունը և որոշում գաղափարը: [6, էջ 136-138]

«Կարդացած ստեղծագործության գաղափարը բացահայտելու կարողության ձևավորման գործընթացի քայլերն են.

- ստեղծագործության բազմակի ընթերցում նպատակային հարցադրումներով և առաջադրանքներով,
- ստեղծագործության մեջ ներկայացված դեպքերի և կերպարների գործողությունների պատճառահետևանքային կապերի բացահայտում, շարժընթացի տրամաբանության ըմբռնում,
- վերը նշված գործընթացներում ստեղծագործության հերոսների դերի բացահայտում՝ նրանց արտաքինի, բառապաշարի, միջավայրի վերլուծության ճանապարհով,
- հեղինակի՝ հերոսների նկատմամբ ունեցած վերաբերմունքի դիտարկում՝ հիմք ընդունելով ստեղծագործության յուրաքանչյուր տարր,

- ստեղծագործության գլխավոր մտքի՝ գաղափարի բացահայտում, ըմբռնում, սեփական դիտանկյունից քննարկում, դատողությունների ձևակերպում”։ [6, էջ 138]

**ԳԼՈՒԽ 2. ԲՆԱԳՐԻ ՇՈՒՐՁ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԳԱՂԱՓԱՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԸ**

2.1 ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի պետական կրթական չափորոշիչի և մայրենիի առարկայական ծրագրի վերլուծություն

Չափորոշիչի «Հայոց լեզու, գրականություն և Հայ գրականություն առարկաների բովանդակային պարտադիր միջուկը» ենթավերնագրում ներկայացված է «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների կառուցվածքը, որի մեջ ընդգրկված է երրորդ ենթակետը՝ «կապակցված խոսք»: Այս ենթակետում նշվում է, որ աշակերտները պետք է ունենան «բազմազան գեղարվեստական և ոչ գեղարվեստական տեքստեր կարդալու, կարդացածն ըմբռնելու, տեքստի բովանդակությունը տարբեր ձևերով (համառոտ, հատվածաբար, ստեղծագործաբար և այլն) վերարտադրելու կարողություն: Բանահյուսություն, գրականության տեսություն, գրականություն» ենթավերնագրում ներկայացված է հեքիաթ, առակ, ավանդություն, առասպել, դիցաբանական զրույց, պատմական զրույց, դյուցազներգություն, պոեմ, բալլադ ժանրերի բնորոշումները»: [6, էջ 10-13]

Տարրական դասարաններում աշակերտները գործնականորեն ծանոթանում են այս ստեղծագործություններին, կարդում են, վերլուծում նշված ժանրերի ստեղծագործությունները, աշխատանքներ են կատարվում ստեղծագործությունների հիմնական մտքի, գաղափարի բացահայտման ուղղությամբ:

Առարկայական չափորոշչում ներկայացված են նաև ուսումնական գործընթացի եղանակները.

- Դասարանական աշխատանք,
- Արտադասարանական աշխատանք:

Ուսումնական գործընթացի երկու եղանակներն էլ կիրառվում են տարրական դասարաններում մայրենիի դասերի ժամանակ բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում:

Չափորոշիչներում ներկայացված են նաև ուսումնական գործունեության տեսակները.

- անհատական գործունեություն,
- խմբային գործունեություն,
- զույգերով գործունեություն,
- խաղային գործունեություն:

Տարրական դասարաններում մայրենիի դասերին լայնորեն կիրառվում են ուսումնական գործունեության բոլոր տեսակները:

Չափորոշչի «Սովորողին ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները» ենթավերնագրում ասվում է, որ պահանջները տրվում են ըստ հանրակրթական դպրոցի փուլերի՝ տարրական, միջին և ավագ՝ յուրաքանչյուրի համար երեքական մակարդակով: Տարրական դպրոցի առաջին մակարդակը նախատեսում է գիտելիքների, հմտությունների, կարողությունների այն ծավալը, որը բավարարում է կրթական հաջորդ փուլին անցնելու համար: Երկրորդ և երրորդ մակարդակները վկայում են սովորողների ավելի բարձր առաջադիմության մասին:

Տարրական դպրոցն ավարտողների «գիտելիքների համակարգի» առաջին մակարդակում աշակերտը պետք է իմանա արձակ և չափածո ստեղծագործությունների տարբերությունները, տեքստը, վերնագիրը:

Երկրորդ մակարդակում՝ ճանաչի հայ և արտասահմանյան մանկագիրներին, երրորդ մակարդակում՝ ճանաչի հայ և արտասահմանյան մանկագիրների ստեղծագործությունները, ինչպես նաև տեքստի տեսակները՝ պատմողական, նկարագրական:

Տարրական դպրոցն ավարտողը «Ճանաչողական, տրամաբանական կարողություններ և հմտություններ» համակարգի առաջին մակարդակում պետք է կարողանա հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը, հասկանա տեքստում նկարագրված իրադարձությունների միջև առկա կապերը:

Երկրորդ մակարդակում պետք է կարողանա հասկանալ կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը, վերաբերմունք դրսևորի գործող անձանց արարքների նկատմամբ, հասկանա նրանց զգայական ապրումները:

Երրորդ մակարդակում հասկանա տեքստի բովանդակությունը, նկարագրողման և սեփական կենսափորձի միջև կապերը, կարողանա գնահատել գործող անձանց վարքագծի դրդապատճառները, ապրումակցել հերոսներին:

Տարրական դպրոցն ավարտողը «Հաղորդակցման կարողություններ և հմտություններ» համակարգի առաջին մակարդակում սովորողը պետք է կարողանա՝ բարձրաձայն, անսխալ ընթերցել տեքստը, պատմել և վերապատմել պատմվածքներ՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը: Երկրորդ մակարդակում սովորողը պետք է կարողանա՝ սեփական բառերով վերարտադրել պատմվածքներ՝ վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի վերաբերյալ, երրորդ մակարդակում՝ պետք է կարողանա լուռ ընթերցել՝ կենտրոնանալով իմաստով անծանոթ բառերի վրա և տեղեկատվական աղբյուրներից ինքնուրույն գտնել բացատրությունը, ստեղծագործաբար բանավոր վերարտադրել տեքստի բովանդակությունը՝ վերաբերմունք դրսևորելով հերոսների վարքագծի վերաբերյալ:

Սովորողը «համագործակցային կարողություններ և հմտություններ» համակարգի առաջին մակարդակում պետք է կարողանա որոշել գրքի բովանդակությունը՝ վերնագրի և համառոտ ծանոթության միջոցով: Երկրորդ մակարդակում պետք է կարողանա գրել կարդացածի մասին, երրորդ մակարդակում տարրական դպրոցն ավարտողը պետք է կարողանա խմբի անդամներին բացատրել առաջադրանքը, լուծումը կամ հիմնական գաղափարը, կարողանա հասկանալ ստեղծագործության հիմնական միտքը:

«Օրագիրը ներկայացվում է աղյուսակի տեսքով, որի երեք սյունակները համապատասխանաբար արտացոլում են ուսուցանվող նյութը, ուսումնական նպատակը և ուսումնական գործունեության տեսակները»:

Առաջին դասարանի գրաճանաչության փուլի **նախաայբբենական** շրջանում աշակերտները պետք է գաղափար կազմեն պատմումի մասին, այբբենարանում գետեղված կամ մեծադիր թեմատիկ նկարի վերաբերյալ պատմություններ հորինեն և շարադրեն: **Այբբենական** շրջանում ձևավորվում են կարդալու և գրելու նախնական կարողությունները: Այս փուլում աշակերտները վերարտադրում են ունկնդրած հեքիաթի կամ պատմվածքի, թեմատիկ նկարի բովանդակությունը: **Հետայբբենական** շրջանում կատարելագործվում են կարդալու նախնական կարողությունները, աշակերտները մասնակցում են կարդացած ստեղծագործության վերլուծությանը:

Առաջին դասարանում ընթերցանության փուլին տրվում է 49 դասաժամ: Այս փուլում պետք է հետևել ընթերցման արագությանը, ճիշտ կարդալ առաջադրված բնագրերը:

«Կարդացածի ընկալում, աշխատանք տեքստի շուրջ» ենթակետն իր մեջ ներառում է ուսուցման հետևյալ նպատակները.

- կարդալու ընթացքում բառակապակցությունների և բառերի իմաստների ընկալում,
- կարդալու ընթացքում բառակապակցությունների և բառերի իմաստների ընկալում,
- գրական ստեղծագործության հուզական կողմի ընկալման կարողության ձևավորում,
- հերոսների զգայական վիճակը գնահատելու կարողության ձևավորում,
- որոշել դեպքերի և դրանց շարադրանքի հաջորդականությունը,
- տեքստը բաժանել իմաստային ամբողջական մասերի,
- գուշակել տեքստի բովանդակությունը,
- վերարտադրել ընթերցած տեքստի բովանդակությունը,
- տեսածի, լսածի, դիտածի մասին խոսք կազմել, արտահայտել սեփական մտքերը,
- մանկական ստեղծագործություններ կարդալու, դրանց վերաբերյալ կարծիք հայտնելու ունակության ձևավորում, ինչպես նաև քննարկել և վերլուծել դրանց իմաստն ու բովանդակությունը:

Երկրորդ դասարանի՝ «Կարդացածի ընկալում, աշխատանք տեքստի շուրջ» ենթակետն իր մեջ ներառում է ուսուցման հետևյալ նպատակները.

- գեղարվեստական ստեղծագործության զգայական ընկալման ապահովում,
- տեքստի սկիզբ, ավարտ, դեպքերի հաջորդականության տարբերում,
- տեքստի բովանդակության ընկալում,
- տեքստը վերնագրելու կարողությունների մշակում,
- բարոյական-գեղագիտական արժեքների ձևավորում,
- տեքստի բաժանում մասերի՝ հասկանալու համար հիմնական միտքը,
- տեքստի բովանդակությունը վերարտադրման կարողության ձևավորում,

- տեքստում նկարագրված դեպքերի հաջորդականության որոշում:

Երրորդ դասարանի՝ «Կարդացածի ընկալում, աշխատանք տեքստի շուրջ» ենթակետն իր մեջ ներառում է ուսուցման հետևյալ նպատակները.

- ստեղծագործության կերպարային, տրամաբանական և զգայական միասնության ընկալում,
- աշակերտների հաղորդակցական կարողությունների ձևավորում,
- գրական ստեղծագործությունն ճանաչողական նպատակով կիրառելու կարողության ձևավորում,
- ստեղծագործական հերոսների արարքները և դրանց դրդապատճառները որոշելու կարողության ձևավորում:

Չորրորդ դասարանի՝ «Կարդացածի ընկալում, աշխատանք տեքստի շուրջ» ենթակետն իր մեջ ներառում է ուսուցման հետևյալ նպատակները.

- տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դատողություններ անելու կարողությունների զարգացում,
- գործող անձանց հոգեվիճակները, զգացմունքներն ու մտքերը ձայնի փոփոխմամբ ճիշտ արտահայտելու և ապրումակցելու կարողության մշակում,
- դեպքերի նկարագրության տրամաբանական հաջորդականության և մտքի ճշտության պահպանում:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ ուսումնական գործընթացը ճիշտ կազմակերպելու և ցանկալի արդյունքին հասնելու համար անհրաժեշտ պայման է ՀՀ հանրակրթական պետական առարկայական չափորոշչի և մայրենիի ծրագրի ուսումնասիրումը և տրամաբանական կիրառումը, քանի որ վերոնշյալ փաստաթղթերում բավարար չափով ուշադրության է արժանացել մեր թեզի խնդրո առարկան:

2.2 Մայրենիի այլընտրանքային դասագրքերի («Մայրենի 3») վերլուծություն

Հանրակրթական դպրոցներում գործում են 3-րդ դասարանի մայրենիի այլընտրանքային հետևյալ դասագրքերը՝ Վաչագան Ա. Սարգսյան, Հեղինե Խաչատրյան, Կարինե Թորոսյան, Ելենա Ջիլավյան համահեղինակային «Մայրենի

3» դասագիրքը և Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան համահեղինակային «Մայրենի 3» դասագիրքը:

Մեր հիմնախնդրի տեսանկյունից ուսումնասիրելով առաջին դասարանի մայրենիի նշված դասագիրքերը՝ պարզեցինք, որ վերոթվարկված դասագրքերից առաջինն իր մեջ ներառում է հետևյալ վեց թեմատիկ խմբերը.

1. «Փոքրիկ պատուհան դեպի մեծ աշխարհ»,
2. «Բա՛ց արա թերթերդ, տեսնենք հրաշքներդ»,
3. «Ժողովուրդն իմաստուն է»,
4. «Հայրենի՛ք, ես մի զարկն եմ քո բազկի»,
5. «Լինում է, չի լինում, մի հեքիաթ է լինում»,
6. «Ամենատվորական հրաշքներ»:

Ուսումնասիրելով դասագիրքը՝ տեսնում ենք, որ բոլոր թեմաները սկսվում են թեմատիկ նկարով կամ նկար-պատմությամբ, որոնց գլխավերևում գրված է թեմայի վերնագիրը, և բոլոր թեմաները ավարտվում են «Ստուգի՛ր ինքդ քեզ» վերնագրով առաջադրանքների շարքով: Այստեղ ներառված են հարցեր ամբողջ թեմայի վերաբերյալ: Դասագրքում ներառված յուրաքանչյուր ստեղծագործությունից հետո առկա է հարցերի շարք, որոնց միջոցով պարզում ենք երեխաների կողմից նյութը յուրացնելու աստիճանը: Ստեղծագործություններին կից առկա են նաև առաջադրանքներ լեզվական նյութի վերաբերյալ: «Բառը ափի մեջ» խարագրի ներքո որոշ ստեղծագործություններին կից տրված են լրացուցիչ տեղեկություններ որևէ առարկայի կամ երևույթի վերաբերյալ: Մի շարք ստեղծագործություններին կից առկա են առած-ասածվածքներ՝ ստեղծագործության հիմնական գաղափարը արտահայտող:

Իսկ բոլոր թեմաներից հետո առկա է «Ամփոփի՛ր իմացածդ, ստուգի՛ր ինքդ քեզ» վերնագրով հարցերի շարքը, որը իր մեջ ներառում է հարցեր բոլոր թեմաների վերաբերյալ: Այստեղ ներառված հարցերը միտված են ստուգելու տվյալ առարկայից երեխաների ձեռք բերած գիտելիքները:

Առաջին՝ «Փոքրիկ պատուհան դեպի մեծ աշխարհ» թեմատիկ խումբը իր մեջ ներառում է **տասնմեկ** ստեղծագործությունները: Այդ ստեղծագործություններից **յոթը** չափածո ստեղծագործություններ են, **չորսը՝** արձակ, որոնցից **ինը** հայ

հեղինակների ստեղծագործություններ են, **մեկը** ժողովրդական ստեղծագործություն է, **մեկը**՝ արտասահմանյան, ստեղծագործություններից **յոթը** Բանաստեղծություն է, **երկուսը**՝ պատմվածք, **մեկը** հեքիաթ է, **մեկն էլ**՝ գրույց:

Երկրորդ «Բա՛ց արա թերթերդ, տեսնենք հրաշքներդ» թեմատիկ խումբը իր մեջ ներառում է **տասը** թեմաներ: Երկրորդ թեմատիկ խմբում ընդգրկված ստեղծագործություններից **չորսը** արձակ ստեղծագործություններ են, **վեցը**՝ չափածո, որոնցից **ութը** հայ հեղինակների ստեղծագործություններ են, **երկուսը**՝ արտասահմանյան, ստեղծագործություններից **չորսը** պատմվածքներ են, **վեցը**՝ Բանաստեղծություններ:

Երրորդ՝ «Ժողովուրդն իմաստուն է» թեմատիկ խումբը կազմված է **տասներկու** ստեղծագործություններից: Այս թեմատիկ խմբում ընդգրկված ստեղծագործություններից **ինը** արձակ ստեղծագործություններ են, **երեքը**՝ չափածո, որոնցից **վեցը** հայ հեղինակների ստեղծագործություններն են, **երեքը**՝ արտասահմանյան հեղինակների ստեղծագործություններն են, **երկուսն էլ** ժողովրդական ստեղծագործություններ են: Ստեղծագործություններից **երկուսը** պատմվածք է, **մեկը**՝ հեքիաթ, **մեկը**՝ Բանաստեղծություն, **հինգը** առակներ են, **երեքը**՝ ժողովրդական ստեղծագործություններ:

Չորրորդ՝ «Հայրենիք, ես մի գարկն եմ քո Բազկի» թեմատիկ խմբում ընդգրկված են **ութ** ստեղծագործություններ: Այստեղ ընդգրկված ստեղծագործություններից **վեցը** հայ հեղինակների ստեղծագործություններն են, **երկուսն էլ**՝ ավանդություն, որոնցից **վեցը** արձակ ստեղծագործություններ են, **երկուսն էլ**՝ չափածո: Ստեղծագործություններից **երեքը** ավանդություններն են, **մեկը**՝ Էպոս, **մեկը**՝ Բանաստեղծություն, **մեկը**՝ գրույց, **երկուսն էլ**՝ պատմվածքներ:

Հինգերորդ՝ «Լինում է, չի լինում՝ մի հեքիաթ է լինում» թեման իր մեջ ներառում է **հինգ** ստեղծագործություններ: Այս թեմայի մեջ ընդգրկված ստեղծագործություններից **երկուսը** հայ հեղինակների ստեղծագործություններն են, **երեքը**՝ արտասահմանյան հեղինակների, որոնցից **չորսը** արձակ ստեղծագործություններ են, **մեկը**՝ չափածո: Թեմատիկ խմբում ընդգրկված բոլոր **հինգ** ստեղծագործություններն էլ հեքիաթներ են:

Վերջին՝ «Ամենասովորական հրաշքներ» թեմատիկ խմբում ներառված են **տասներկու** ստեղծագործություններ. թեմայի մեջ ներառված **տասը** ստեղծագործություններից **երկուսը** հայ հեղինակների ստեղծագործություններն են, **ութը՝** արտասահմանյան գրողների, որոնցից **երկուսը** չափածո ստեղծագործություններ են **ութը՝** արձակ: Ստեղծագործություններից **երկուսը** բանաստեղծություններ են, **վեցը՝** պատմվածքներ, **երկուսը՝** հեքիաթներ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Վաչագան Ա. Սարգսյան, Հեղինե Խաչատրյան, Կարինե Թորոսյան, Ելենա Ջիլավյան հեղինակների հրատարակած դասագիրքը տեսնում ենք, որ այն կազմված է **վեց** թեմատիկ խմբերից, որոնք իրենց մեջ ներառում են ընդհանուր **հիսունվեց** ստեղծագործություն, որոնցից **երեսունյոթը** հայ հեղինակների ստեղծագործություններ են (**երեսունչորսը** հեղինակային ստեղծագործություններ են, **երեքը՝** հայ ժողովրդական բանահյուսությունից), **տասնինը՝** արտասահմանյան հեղինակների ստեղծագործություններ: Ստեղծագործություններից **քսանմեկը** չափածո ստեղծագործություններ են, **երեսունհինգը՝** արձակ, որոնցից **տասնյոթը** բանաստեղծություններ են, **տասնհինգը՝** պատմվածքներ, **իննը՝** հեքիաթներ, **երկուսը՝** գրույցներ, **հինգը՝** առակներ, **երեքը՝** ժողովրդական ստեղծագործություններ, **երեքը** ավանդություններ, **մեկն էլ՝** էպոս:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզեցինք, որ այս դասագրքի ստեղծագործություններին կից մեթոդական կառույցում ստեղծագործության գաղափարի վերհանման առաջադրանքները շատ քիչ են, կան ստեղծագործություններ, որոնցում այդպիսի առաջադրանքներ գրեթե չկան:

Ուսումնասիրելով «Բաց արա թերթերդ, տեսնենք հրաշքներդ» թեմատիկ խմբի «Մարը» ստեղծագործությունը և դրան կից առաջադրանքները, պարզեցինք որ չկան այնպիսի առաջադրանքներ, որոնք կնպաստեն ստեղծագործության գաղափարի բացահայտմանը: Ստեղծագործության մեջ տեղ գտած դեպքերը երեխաների կյանքն բնորոշ չեն: Թե ինչ է ցանկանում հեղինակը փոխանցել ընթերցողին դժվար է ընկալել:

Նշված դասագրքի «Ժողովուրդն իմաստուն է» թեմատիկ խմբի «Անտառն ու քամին» առակին կից առաջադրանքներից առակի գաղափարի վերհանմանը նպաստում են շատ քիչ առաջադրանքներ: Առաջադրանքներից միայն մեկում է, որ

խոսք է գնում ստեղծագործության գաղափարի մասին. աշակերտները առած-ասացվածքներից պետք է ընտրեն այն առած-ասացվածքը, որն արտահայտում է ստեղծագործության հիմնական գաղափարը:

Առաջադրանքը կնպաստի ստեղծագործության գաղափարի բացահայտմանը, եթե ուսուցիչը այն իրականացնի նպատակային: Կարծում ենք՝ միայն հմուտ ուսուցիչը կկարողանա լուծել այդքան կարևոր խնդիրը:

Ի տարբերություն՝ Վաչագան Ա. Սարգսյան, Հեղինե Խաչատրյան, Կարինե Թորոսյան, Ելենա Ջիլավյան համահեղինակային «Մայրենի 3» դասագրքի, որը իր մեջ ներառում էր **վեց** թեմատիկ խումբ, Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան համահեղինակային «Մայրենի 3» դասագիրքը կազմված է **տասը** թեմատիկ խմբից.

1. «Իմ քաղցրանուն, իմ բարձրանուն»,
2. «Իմ ընտանիքը»,
3. «Աշնան գույները»,
4. «Լեզուն զենք է, գիտելիքը՝ ուժ»,
5. «Արձաթե թիթեռնիկների ժամանակը»,
6. «Մարդն իր գործով է ճանաչվում»,
7. «Գարունը այնքան ծաղիկ է վառել»,
8. «Մեր երկրորդ տունը»,
9. «Մեր հայրենիքի հերոս պաշտպանները»,
10. «Ամռան հմայքները»:

Պարզեցինք, որ այլընտրանքային երկու դասագրքերն էլ ունեն նույնպիսի կառուցվածք:

Առաջին՝ «Իմ բարձրանուն, իմ քաղցրանուն» թեմատիկ խմբում ընդգրկված են **չորս** ստեղծագործություններ. Բոլորն էլ հայ հեղինակների ստեղծագործություններ են, որոնցից **երեքը** չափածո ստեղծագործություններ են, **մեկը՝** արձակ, ստեղծագործություններից **երեքը** բանաստեղծություններ են, **մեկը՝** հեքիաթ,

Երկրորդ՝ «Իմ ընտանիքը» թեմատիկ խմբում ընդգրկված են **երեք** ստեղծագործություններ.

Թեմատիկ խմբում ընդգրկված **երեք** ստեղծագործություններից **երկուսը** հայ հեղինակների ստեղծագործություններն են, **մեկը՝** արտասահմանյան, որոնցից

երկուսը չափաժող ստեղծագործություններ են, **մեկը**՝ արձակ, ստեղծագործություններից **երկուսը** բանաստեղծություններ են, **մեկը**՝ նամակ:

Երրորդ՝ «Աշնան գույները» թեմատիկ խմբում ներառված ստեղծագործությունները **հինգն** են.

Թեմատիկ խմբում ընդգրկված **հինգ** ստեղծագործություններն էլ հայ հեղինակների ստեղծագործություններն են, որոնցից **երեքը** չափաժող ստեղծագործություններ են, **երկուսը**՝ արձակ, ստեղծագործություններից **երեքը** բանաստեղծություններ են, **մեկը**՝ զրույց, **մեկն** էլ՝ հեքիաթ:

Չորրորդ՝ «Լեզուն գենք է, գիտելիքը՝ ուժ» թեմատիկ խմբի ստեղծագործությունները **չորսն** են.

Չորրորդ թեմատիկ խմբում ներառված **չորս** ստեղծագործություններն էլ հայ հեղինակների ստեղծագործություններն են, որոնցից **երեքը** չափաժող ստեղծագործություններ են, **մեկը**՝ արձակ, ստեղծագործություններից **երկուսը** բանաստեղծություններ են, **մեկը**՝ հեքիաթ, **մեկն** էլ՝ առակ:

Հինգերորդ՝ «Արծաթե թիթեռնիկների ժամանակը», թեմատիկ խմբում ներառված ստեղծագործությունները **երեքն** են.

Հինգերորդ թեմատիկ խմբում ներառված **երեք** ստեղծագործություններից **երկուսը** հայ հեղինակների ստեղծագործություններն են, **մեկը**՝ արտասահմանյան, որոնցից **երկուսը** չափաժող ստեղծագործություններ են, **մեկը**՝ արձակ, ստեղծագործություններից **երկուսը** բանաստեղծություններ են, **մեկը**՝ **հեքիաթ**:

Վեցերորդ՝ «Մարդն իր գործով է ճանաչվում», թեմատիկ խմբում ներառված են **ինը** ստեղծագործություններ.

Վեցերորդ թեմատիկ խմբում ներառված **ինը** ստեղծագործություններից **հինգը** հայ հեղինակների ստեղծագործություններն են, **չորսը**՝ արտասահմանյան, որոնցից **վեցը** արձակ ստեղծագործություններ են, **երեքը**՝ չափաժող, ստեղծագործություններից **երկուսը** հեքիաթներ են, **երկուսը** պատմվածքներ, **երկուսը**՝ բանաստեղծություններ, **երեքն** էլ՝ առակներ:

Յոթերորդ՝ «Գարունը այնքան ծաղիկ է վառել» թեմատիկ խմբում ընդգրկված ստեղծագործությունները **հինգն** են.

Յոթերորդ թեմատիկ խմբում ներառված **հինգ** ստեղծագործություններն էլ հայ հեղինակների ստեղծագործություններն են, որոնցից **երկուսը** չափածո ստեղծագործություններ են, **երեքը**՝ արձակ, ստեղծագործություններից **երկուսը** բանաստեղծություններ են, **երկուսը**՝ հեքիաթներ, **մեկն էլ**՝ գրույց:

Ութերորդ՝ «Մեր երկրորդ տունը», թեմատիկ խմբում ընդգրկված են **չորս** ստեղծագործություններ.

Այս թեմատիկ խմբում ընդգրկված **չորս** ստեղծագործություններն էլ հայ հեղինակների ստեղծագործություններն են, **երկուսը** արձակ ստեղծագործություններ են, **երկուսը**՝ չափածո, ստեղծագործություններից **երկուսը** բանաստեղծություններ են, **երկուսն էլ**՝ պատմվածքներ:

Իններորդ՝ «Մեր հայրենիքի հերոս պաշտպանները», թեմատիկ խմբում ընդգրկված են **հինգ** ստեղծագործություններ.

Թեմատիկ խմբի **հինգ** ստեղծագործություններն էլ հայ հեղինակների ստեղծագործություններն են, որոնցից **մեկը** արձակ ստեղծագործություն է, **չորսը**՝ չափածո, ստեղծագործություններից **երեքը** բանաստեղծություններ են, **մեկը**՝ ավանդազրույց, **մեկն էլ**՝ էպոս:

Տասներորդ՝ «Ամռան հմայքները» թեմատիկ խմբում ընդգրկված են **վեց** ստեղծագործություններ.

Վերջին թեմատիկ խմբում ընդգրկված **հինգ** ստեղծագործություններն էլ հայ հեղինակների ստեղծագործություններն են, որոնցից **մեկը** արձակ ստեղծագործություն է, **չորսը**՝ չափածո, ստեղծագործություններից **չորսը** բանաստեղծություններ են, **մեկը**՝ հեքիաթ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան համահեղինակային «Մայրենի 3» դասագիրքը, պարզեցինք, որ այն բաղկացած է **տասը** թեմատիկ խմբերից, որոնց մեջ ընդհանուր ներառված են **քառասունյոթ** ստեղծագործություններ, որոնցից **քառասունմեկը** հայ հեղինակների ստեղծագործություններն են, **վեցը**՝ արտասահմանյան (**հինգը**՝ հեղինակային ստեղծագործություններ, **մեկը**՝ ժողովրդական): Ստեղծագործություններից **քսանութը** չափածո ստեղծագործություններ են, **տասնինը**՝ արձակ, որոնցից

քսանհինգը բանաստեղծություններ են, **իննը**՝ հեքիաթներ, **չորսը**՝ պատմվածքներ, **չորսը**՝ առակներ, **երեքը**՝ գրույցներ, **մեկը**՝ նամակ, **մեկն էլ**՝ էպոս:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզեցինք, որ ինչպես նախորդ դասագրքում, այնպես էլ այս դասագրքում ստեղծագործության գաղափարի վերհանմանը նպաստող առաջադրանքները կա՛մ շատ քիչ են, կա՛մ առհասարակ չկան:

Ուսումնասիրելով «Մարդն իր գործով է ճանաչվում» թեմատիկ խմբի «Որսորդի սիրտը» ստեղծագործությունը, պարզեցինք որ այն չի համապատասխանում երեխաների տարիքային առանձնահատկություններին, երրորդ դասարանի երեխաների զգայական աշխարհի առանձնահատկություններին: Ստեղծագործության մեջ տեղ գտած դեպքերը, նկարագրությունները երեխաների մոտ կարող են առաջացնել մեծ հուզականություն, խղճի խայթ դեպի կենդանին և հակասական վերաբերմունք որսորդի նկատմամբ:

Ուսուցիչը մեծ խնդրի առաջ է կանգնում հատկապես այն դեպքում, երբ դասարանում ունի շատ զգայուն աշակերտ կամ աշակերտներ: Մեր աշխատանքային գործունեության ընթացքում հանդիպել ենք այնպիսի դեպքի, երբ ստեղծագործության ուսումնասիրության ժամանակ երեխան նույնիսկ արտասովել է:

Նույն դասագրքի «Ամենատխրալին ու ամենաուրախալին» ստեղծագործությանը կից գաղափարի բացահայտմանը միտված առաջադրանքներ գրեթե չկան: Առաջադրանքների մեծ մասը լեզվական բնույթի են: Առաջադրանքներից ոչ մեկում խոսք չի գնում աշխարհի մեծագույն չարիք պատերազմի և բերկրալի երազանք խաղաղության մասին: Միայն վերջին՝ «Դադարի պահ» բաժնում ավելորդ համարելով տանկը, հեղինակը մերժում է պատերազմը՝ նախընտրությունը տալով խաղաղ կյանքին:

Այսպիսով՝ ուսումնասիրելով և համեմատելով այլընտրանքային երկու դասագրքերը՝ պարզեցինք, որ դասագրքերում բնականաբար տեղ է հատկացված բնագրին և նրա շուրջ տարվող տարատեսակ աշխատանքներին (առաջին դասագիրքը բաղկացած է **վեց** թեմատիկ խմբերից, ընդհանուր **հիսունվեց** ստեղծագործությամբ, երկրորդ դասագիրքը՝ **տասը** թեմատիկ խմբերից, ընդհանուր **քառասունյոթ** ստեղծագործությամբ), որոնց ճիշտ և նպատակային ուսուցումը

կնպաստի ստեղծագործության գաղափարի բացահայտման կարողության ձևավորմանն ու զարգացմանը:

Ուսումնասիրելով դասագրքերի մեթոդական կառույցները, բացահայտել ենք, թե որքանով են նպաստում ստեղծագործությունները երեխաների ստեղծագործության գաղափարի ընկալման կարողության զարգացմանը: Երկու դասագրքում էլ ստեղծագործության գաղափարի վեր հանման առաջադրանքները շատ քիչ են, կան ստեղծագործություններ, որոնցում այդպիսի առաջադրանքներ գրեթե չկան: Մեծ գործը թողնված է ուսուցչին, ինչը շատ է դժվարեցնում հատկապես սկսնակ ուսուցիչների աշխատանքը:

2.3 Հետազոտության արդյունքների մշակում և վերլուծություն

Ուսուցիչների շրջանում իրականացրած հարցախույզի արդյունքների վերլուծություն


Հանրակրթական հիմնական դպրոցի տարրական դասարաններում սովորողների ստեղծագործության հիմնական գաղափարի բացահայտման կարողության ձևավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքների բովանդակությունը բացահայտելու նպատակով իրականացրել ենք հարցախույզ Ավան վարչական շրջանի թիվ 171 հիմնական դպրոցում: Հարցախույզին մասնակցել է տարրական դասարանների 12 ուսուցիչ (Հարցաթերթիկը կազմված էր 6 հարցից):

Հարցախույզի միջոցով փորձել ենք պարզել, թե ստեղծագործության հիմնական գաղափարի բացահայտման կրտսեր դպրոցականների կարողության ձևավորման հիմնախնդիրը ինչքանով է մտահոգում ուսուցիչներին, և ինչպիսի աշխատանքներ են իրականացնում ուսուցիչները նշված հիմնախնդրի ձևավորման նպատակով և ինչ դժվարությունների առաջ են կանգնում նշված հիմնախնդրի իրականացման ընթացքում:

Հարցաթերթիկում կային այնպիսի հարցեր (Տե՛ս 1-ին, 2-րդ), որոնց վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար, ուսուցիչները հնարավորություն

ունեին միաժամանակ մի քանի տարբերակ ընտրելու, հետևաբար և այս հարցի վերլուծության տվյալները չեն կարող հավասար լինել 100 տոկոսի:

Հարց 1. Նշեք խնդրեմ, կրտսեր դպրոցի մայրենիի դասի հիմնախնդիրներից երեքը:




Առաջին հարցով պարզեցինք, թե ուսուցիչների համար որոնք են մայրենիի դասի հիմնախնդիրներից կարևորագույն երեքը: Այս հարցի տարբերակներից ուսուցիչները պետք է ընտրեին իրենց համար կարևորագույն երեքը:

Հարցմանը մասնակցող ուսուցիչների 100 %-ը նշել է, որ մայրենիի դասի հիմնախնդիրներից է հասկանալով կարդալու կարողությունը, 66,7%-ը նշել է, որ մայրենիի դասի հիմնախնդիրներից է կապակցված խոսքի զարգացումը, 66,7%-ը՝ համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացումը, 58%-ը՝ ընթերցասիրության դաստիարակումը և միայն 8%-ն է ընտրել ազգային-համամարդկային արժեքների ձևավորումը: Կարևորում ենք նշել, որ ուսուցիչները ունեին նաև այլ պատասխան նշելու հնարավորություն: Ուսուցիչներից միայն երկուսն էին օգտվել այդ հնարավորությունից՝ նշելով, որ նշված բոլոր հիմնախնդիրներն էլ կարևոր են ու շաղկապված: Նշել էին նաև, որ մայրենիի դասի հիմնախնդիրներից է ստեղծագործական մտածողության զարգացումը: Այսպիսով՝ արդյունքների վերլուծությունից երևում է, որ ուսուցիչները արժևորում են հասկանալով կարդալու հիմնախնդիրը և այն համարում են մայրենիի դասի գերխնդիր՝ իհարկե կարևորելով նաև մյուս բոլոր հիմնախնդիրների

իրականացումը և շաղկապվածությունը՝ առաջարկելով ուշադրություն դարձնել նաև ստեղծագործական մտածողության զարգացման հիմնախնդրին:

Հարց 2. Ո՞րն է համարվում մայրենիի դասի խթանման փուլի հիմնախնդիրը:




Հարցման արդյունքում պարզեցինք, որ հարցմանը մասնակցող ուսուցիչներից 3-ը՝ 25%-ը, մայրենիի դասի խթանման փուլի հիմնախնդիրը համարում են զրույցը ստեղծագործության ընդհանուր գաղափարի շուրջ. հարցվող ուսուցիչներից 9-ը՝ 75%-ը նշել է, որ մայրենիի դասի հիմնախնդիրը ուսումնասիրվող նյութի նկատմամբ հետաքրքրության ձևավորումն է:

Այսպիսով պարզեցինք, որ հարցմանը մասնակցող բոլոր ուսուցիչները գիտակցում են, թե ինչ խնդիր է իրենց առջև դրված մայրենիի դասի խթանման փուլում: Միայն երեք ուսուցիչ է պատասխանել, որ մայրենիի դասի հիմնախնդիրը զրույցն է ստեղծագործության ընդհանուր գաղափարի շուրջ: Կարծում ենք, որ այս ուսուցիչները ևս հստակ գիտակցում են իրենց առջև դրված խնդիրը, սակայն նշել են ոչ թե բուն հիմնախնդիրը, այլ դրան հասնելու մեթոդական հնարներից մեկը՝ որևէ գրառում չանելով այլ պատասխան բաժնում:

Հարց 3. Ի՞նչ աշխատանքներ եք իրականացնում մայրենիի դասի իմաստավորման փուլում: (Նշեք Ձեզ համար կարևոր երկուսը):

Գծագիր 3



Ուսուցիչները այս հարցի տարբերակներից պետք է ընտրեին երկու առավել հաճախ կիրառվող աշխատանքները մայրենիի դասի իմաստավորման փուլում:


Հարցմանը մասնակցած ուսուցիչներից 3-ը՝ 17%-ը, նշել են, որ մայրենիի դասի իմաստավորման փուլում կիրառում են կանգառներով ընթերցանությունը, 10-ը՝ 44%-ը՝ կյանքի հետ կապի ապահովումը, 3-ը՝ 17%-ը՝ հարցազրույց և 6-ը՝ 13%-ը՝ բանավեճ:

Այսպիսով, հարցման արդյունքում պարզեցինք, որ ուսուցիչները մայրենիի դասագործընթացում կարևորում են կյանքի հետ կապի ապահովումը, ինչպես նաև բանավեճը: Շատ քիչ ուսուցիչներ են կարևորում կանգառներով ընթերցանությունը և հարցազրույցը: Պարզեցինք, որ հարցվող ուսուցիչները մայրենիի դասագործընթացում իրականացնում և կարևորում են նշված աշխատանքները, քանի որ այս աշխատանքների արդյունքում կհասնենք նրան, որ աշակերտները կկարողանան բացահայտել և ընկալել ստեղծագործության հիմնական գաղափարը:

Ուսուցիչները նշված հարցի վրաբերյալ ևս ունեին այլ պատասխան նշելու հնարավորություն, սակայն ոչ ոք այլ պատասխան չէր նշել:

Հարց 4. Ձեր կարծիքով, մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործությունները նպաստում են կրտսեր դպրոցականների կարդացած ստեղծագործության գաղափարի բացահայտման կարողությունների ձևավորմանը:

Գծագիր 4



Հարցման արդյունքում պարզեցինք, որ ուսուցիչներից 7-ը՝ 58%-ը, կարծում են, որ դասագրքերում զետեղված ստեղծագործությունները նպաստում են կրտսեր դպրոցականների կարդացած ստեղծագործության գաղափարի բացահայտման ուղղությամբ կարողությունների ձևավորմանը, 5-ը՝ 42%-ը կարծում են, որ չեն նպաստում: Ուսուցիչները ներկայացրել են իրենց հիմնավորումները նշված հարցի վերաբերյալ.

1. Այո՛, ստեղծագործությունները նպաստում են աշակերտների կարդացած ստեղծագործության գաղափարի բացահայտման ուղղությամբ կարողությունների ձևավորմանը:
2. Ո՛չ: Ոչ բոլոր ստեղծագործություններն են նպաստում կարդացած ստեղծագործության գաղափարի բացահայտման կարողությունների ձևավորմանը:
3. Այո՛, ստեղծագործությունները փորձում են կապ ստեղծել կյանքի հետ:
4. Ո՛չ: Կարծում եմ, որ պետք է էլ ավելի շատ ուշադրություն դարձնեն տարիքային առանձնահատկություններին:
5. Այո՛, աշակերտները տարբերում են ստեղծագործության մեջ հիմնական գաղափարը, հիմնավորում են բազմաթիվ օրինակներով: Տեքստից առանձնացնում են գաղափարն արտահայտող մտքերը:

6. Այո՛. այդ ամենին օգնում են նյութին զուգահեռ տրվող հարցերը, առաջադրանքները, կատարվող աշխատանքները:
7. Այո՛, աշակերտները տարբերում են տեքստի մեջ հիմնական գաղափարը, հիմնավորում են գանազան օրինակներով...
8. Ո՛չ. բոլոր տեքստերը կարելի է օգտագործել կրտսեր դպրոցականների մոտ նշված կարողությունը ձևավորելու համար:
9. Այո՛, ընտրված են կրտսեր տարիքի առօրյային, նախաափրություններին ու հետաքրքրություններին առնչվող ստեղծագործություններ, ազգային շունչ ու հոգի են պարունակում, դյուրըմբռնելի են:
10. Ո՛չ, կան նյութեր, որոնք պետք է հանվեն դասագրքից:
11. Ո՛չ. մասամբ: Իմ կարծիքով արժե առավել արդիական, այժմյան հասարակության, անձի ձևավորմանը համահունչ դասանյութեր տեղադրել, իհարկե, համադրելով հնի հետ: Քայլենք ժամանակին համընթաց:
12. Այո՛, ստեղծագործությունները թույլ են տալիս գնահատել հերոսների վարքագծի դրդապատճառները:

Այսպիսով, ուսուցիչների մի մասը պնդում է, որ որոշակի աշխատանք պետք է տարվի դասագրքերը արդիականացնելու նպատակով, մի մասն էլ պնդում է, որ դասագրքում ներառված ստեղծագործությունները բավարար են, որպեսզի աշակերտների մոտ ձևավորվի ստեղծագործության հիմնական գաղափարի բացահայտման կարողությունը, իհարկե, կարևորելով ուսուցչի ճիշտ աշխատանքը՝ այդ նպատակին հասնելու համար:

Հարց 6. Նշեք, խնդրեմ, այն դժվարությունները, որոնց հանդիպում եք կարդացած ստեղծագործության գաղափարի բացահայտման գործընթացում:

Վերջին հարցի վերաբերյալ ևս տարբերակներ չեն առաջադրվել, ուսուցիչները պետք է առաջադրեին իրենց տարբերակները անհատապես: Ներկայացնենք պատասխանները.

Ուսուցչի դժվարությունները		Աշակերտների դժվարությունները	
Ստեղծագործության բացահայտմանը	գաղափարի նպաստող	Գաղափարի բացահայտում:	ինքնություն

առաջադրանքները դասագրքերում քիչ են:	
Աշակերտների տարիքին ոչ համապատասխան նյութերի մատուցում:	Մտքի ոչ ճիշտ ընկալում, կաշկանդվածություն, ոչ համապատասխան բառապաշար:
Օգտագործել տարբեր տեխնոլոգիաներ արդյունքի հասնելու համար:	Աշակերտների ակտիվ բառապաշարը աղքատիկ է, զարգացած չէ կամային ուշադրությունը, հետաքրքրությունն ընթերցանության նկատմամբ բավարար չէ:
Կարողանալ երեխաների գիտակցությանը հասցնել ստեղծագործության գլխավոր մտքի, գաղափարի ընկալումը:	Երբեմն դժվարանում են առանձնացնել հենակետային՝ բանալի բառերը: Պատճառն այն է, որ թեման կարդում են չհասկանալով:
Տարբեր ընկալունակությամբ աշակերտներ:	Գլխավոր մտքի երկրորդականից տարբերելու կարողությունը:
Դժվար ընկալող աշակերտներ: Կրթական միջավայրի թերություններ:	Ուշադրության պակաս: Կրթական միջավայրի թերություններ:
Երբեմն դժվարություն է ստեղծվում տեքստը համադրել կյանքի հետ:	Չափից դուրս ակտիվություն: Առաջինը լինելու ձգտում:
Հասանելի դարձնել բոլորին ենթատեքստի բացահայտումը:	Ինքնուրույն բացահայտել միտքը:
Ստեղծագործության անիմաստ լինելը: Տարամակարդակ աշակերտների առկայություն, ոչ աշխատասեր ծնողներ, ովքեր տանը չեն հետևում իրենց երեխաներին:	Այլ զբաղմունքների առկայություն, տեքստերի ոչ ճշմարիտ լինելը:

Ուսումնասիրելով պատասխանները՝ կարելի է եզրակացնել, որ ուսուցիչների հիմնական դժվարությունը երեխաների տարիքային առանձնահատկություններին

ոչ համապատասխան ստեղծագործությունների առկայությունն է դասագրքերում (կան այնպիսի ստեղծագործություններ, որոնք ասելիք չունեն), ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաները օգտագործելու սահմանափակումները:

Ողջունելի է նաև, որ ուսուցիչների մի մասը ուսուցման գործընթացում դժվարություններ չունի:

Կարծում ենք՝ ուսուցիչները սուբյեկտիվ պատասխաններ են տվել, ոչ մի դժվարություն չկապելով իրենց հետ, որոնցից կարող են լինել նոր մեթոդներին, նորագույն տեխնոլոգիաներին չտիրապետելը:

Աշակերտների դժվարությունների վերաբերյալ ուսուցիչները նշել են աղքատիկ բառապաշարը, կաշկանդվածությունը, մտքի ոչ ճիշտ ընկալումը:

Հարց 7. Ներկայացրեք, ինչո՞ւրեմ, նշված կարողության ձևավորման արդյունավետությանը նպաստող առաջարկություններ:

Հարցի համար որևէ տարբերակ չի առաջադրվել /բաց հարց էր/. համակարգված ներկայացնենք պատասխանները.

1. Հիմնական գաղափարի բացահայտում, շրջապատում տեսնել այդ կապերը:
2. Հինգ բուպեանոց շարադրանքով (մի քնի նախադասությամբ) ներկայացնել ստեղծագործությունը:
3. Տեքստերը, նկարները ընտրելիս պետք է հաշվի առնել այժմյան պահանջները և դասավանդվող նյութի ընտրության հարցում մեծ տեղ տալ ուսուցչին. թույլ տալ ճկուն համակարգի կիրառում:
4. Ինքնուրույն մտածողությունն ու աշխատանքը, ստեղծագործական ունակությունները խթանող մեթոդական հնարների, խաղերի, միջոցառումների կիրառում և կազմակերպում:
5. Հիմնական գաղափարի բացահայտում, շրջապատում տեսնել այդ կապերը:
6. Հինգ բուպեանոց շարադրանքով (մի քնի նախադասությամբ) ներկայացնել ստեղծագործությունը:
7. Տեքստերը, նկարները ընտրելիս պետք է հաշվի առնել այժմյան պահանջները և դասավանդվող նյութի ընտրության հարցում մեծ տեղ տալ ուսուցչին. թույլ տալ ճկուն համակարգի կիրառում:

8. Ինքնուրույն մտածողությունն ու աշխատանքը, ստեղծագործական ունակությունները խթանող մեթոդական հնարների, խաղերի, միջոցառումների կիրառում և կազմակերպում:

Արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ ստեղծագործության հիմնական գաղափարի բացահայտման կարողության ձևավորման խնդիրը կարևորված է յուրաքանչյուր դասի ընթացքում:

Հարցախույզի իրականացման ընթացքում կարողացանք լսել ուսուցիչների կարծիքները, մտահոգող հարցերը, դիտարկումները, իրենց գործունեության ընթացքում իրականացրած հետաքրքիր մեթոդական դասերի մասին վերլուծություններ, ինչը մեզ շատ օգնեց մեր հետազոտական աշխատանքն իրականացնելիս:

Այսպիսով՝ տարրական դասարանների ուսուցիչներն անդադար աշխատում են, մասնակցում են վերապատրաստումների, պրպտում են, գտնում նորը, զբաղվում ինքնակրթությամբ, փորձի փոխանակմամբ (վերջինս իրականացնում են հիմնականում դասալսումների միջոցով), օգնում են աշակերտներին հաղթահարել դժվարությունները, իսկ այդ նպատակի համար առաջնային են համարում ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ աշակերտները կարողանան ազատ և անկաշկանդ արտահայտել իրենց մտքերը, ինչու չէ, նաև սովորել սխալների վրա և չվախենալ սխալվելուց:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով մեր հետազոտական աշխատանքի շրջանակներում իրականացրած հետազոտության արդյունքները՝ եկանք հետևյալ եզրահանգումներին:

1. Չնայած հիմնախնդրի վերաբերյալ գրականության առկայությանը, այնուամենայնիվ բնագրի շուրջ աշխատանքի միջոցով սովորողների ստեղծագործության գաղափարի բացահայտման կարողության ձևավորման և զարգացման հիմնահարցը բարելավման կարիք ունի:
2. Աշխատանքի հիմնախնդիրը կարևորվում է ՀՀ կրթական չափորոշում և մայրենիի առարկայական ծրագրում, մայրենիի դասագրքերը հազեցած են հետաքրքրաշարժ և բովանդակալից ստեղծագործություններով, սակայն կան ստեղծագործություններ, որոնց իմաստը անմեկնելի, անբացատրելի է: Կան ստեղծագործություններ, որոնք չեն համապատասխանում երեխաների տարիքային առանձնահատկություններին:
3. Իրականացնելով դասալսումներ, ուսուցիչների հետ զրույցներ, վերջիններիս շրջանում հարցախույզ, ինչպես նաև իրականացնելով փորձարարական տարբեր դասեր, վերլուծելով կատարված աշխատանքների արդյունքները՝ մշակեցինք մեթոդական ցուցումները, որոնք, կարծում ենք, կարող են նպաստել աշակերտների՝ ստեղծագործության հիմնական գաղափարի բացահայտման կարողության ձևավորմանն ու զարգացմանը:
4. Պլանավորելով և իրականացնելով դասեր, որոնց ընթացքում կիրառել ենք տարբեր մեթոդներ և հնարներ, մշակել ենք մեթոդական ցուցումներ, որոնք մայրենիի դասերին կարող են նպաստել կրտսեր դպրոցականների՝ կարդացած ստեղծագործության գաղափարի բացահայտման կարողության ձևավորմանն ու զարգացմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դասագործընթացում մեծ տեղ տալ դերային խաղին, և հաճախակի կիրառել «Անկյուններ» մեթոդական հնարը և այն մեթոդական հնարները, որոնք աշակերտներին թույլ կտան բանավիճելու, ինքնաարտահայտվելու, ինքնադրսևորվելու:
2. Վերանայել մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործությունների ընտրությունը, դասագրքերում մեծ տեղ տալ այն ստեղծագործություններին, որոնց գաղափարները հետաքրքիր են, ունեն դաստիարակչական արժեք, աշակերտների կյանքի հետ կապ ունեն:
3. Աշակերտների ուսումնական դրդապատճառների զարգացմանը նպաստում է ժամանակակից տեխնոլոգիաներով դասի իրականացումը: Անհրաժեշտ է դպրոցները հնարավորինս ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բոյաջյան Վ., «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաների ինտեգրման ուսուցողական արժեքը, Նախաշավիղ № 5, Երևան, 2017:
2. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ջանգակ, Երևան, 2018:
3. Գյուրջինյան Դ, Հեքեքյան Ն, «Մայրենի 3», Լույս, Երևան, 2008:
4. Եղոյան Ա, Լորտիկյան Գ, Պատմվածքի ուսուցումը կրտսեր դպրոցականի խոսքի և մտածողության զարգացման միջոց, Նախաշավիղ № 2, Երևան, 2016:
5. Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Թորոսյան Կ., Ջիլավյան Ե., «Մայրենի 3», Լույս, Երևան, 2020:
6. Սիմոնյան Վ., Գրական տարրական գիտելիքները որպես կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորման հիմք, Երևան, 2016:
7. Տեր-Գրիգորյան Ա, Հայոց լեզվի մեթոդիկա, Լույս, Երևան, 1980:
8. ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի պետական կրթական չափորոշիչ և մայրենիի առարկայական ծրագրեր, Անտարես, Երևան, 2015:
9. Соловьёв Александр Юрьевич, Начальная школа,
<https://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%BE%D0%BB%D0%BE%D0%B2%D1%8C%D1%91%D0%B2,%D0%90%D0%BB%D0%B5%D0%BA%D1%81%D0%B0%D0%BD%D0%B4%D1%80%D0%AE%D1%80%D1%8C%D0%B5%D0%B2%D0%B8%D1%87>, 11 декабря 2021 в 21:59.